



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ**

N 30-Ա
19 փետրվարի
 «-----» -----2010թ.

**ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԲԱԺԻՆՆԵՐԻ, ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի և 1.7-րդ կետի 7-րդ պարբերության դրույթներով

որոշում եմ՝

1. Հաստատել.

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի կանոնադրությունը /հավելված թիվ 1, կցվում է/.

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի կանոնադրությունը /հավելված 2, կցվում է/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



Գրիգորյան
 ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 2

Հաստատված է

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի

2010 թ. փետրվարի 19-ի

N 30-Չ հրոշմամբ

Գ Ա Ն Ո Ն Ա Դ Բ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՍԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ

I. Ը Ն Դ Հ Ա Ն ՈՒ Բ Դ Բ ՈՒ Թ Յ Ն Ե Ը

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի (այսուհետ՝ Մարզպետարան) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) իրավաբանական բաժինը (այսուհետ՝ Բաժին) Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է:
2. Բաժինն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, քաղաքացիական և Հողային օրենսգրքերով, «Իրավական ակտերի մասին», «Տեղական Ինքնակառավարման մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական փարույթի մասին», «Վարչական իրավախախտումների մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով և կարգադրություններով, Հայաստանի Հանրապետության կառավարության և վարչապետի որոշումներով, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի (այսուհետ՝ Մարզպետ) որոշումներով և կարգադրություններով, Աշխատակազմի ղեկավարի հրամաններով, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև բաժնի լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերով:
3. Բաժինը կազմավորում, վերակազմակերպում և նրա գործունեությունը դադարեցնում է Մարզպետը՝ օրենքով սահմանված կարգով:
4. Բաժնի կանոնադրությունը հաստատում (փոփոխում) է Մարզպետը:

II. Բ Ա Շ Ն Ի Գ ՈՐԾԱՆՈՒՅԹՆԵՐԸ

5. Բաժինն իր լիազորությունների շրջանակներում
ա) ապահովում է Մարզպետին և Աշխատակազմի ղեկավարին ՀՀ օրենսդրությամբ տրված լիազորությունների և գործունեության օպերատիվությունն ու արդյունավետությունը:
բ) ուսումնասիրում է Մարզպետարանի Աշխատակազմի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների կողմից Մարզպետի և Աշխատակազմի ղեկավարի բննարկմանը ներկայացվող իրավական ակտերի՝ որոշումների, կարգադրությունների և հրամանների նախագծերի համապատասխանությունը ՀՀ գործող օրենսդրությանը, տալիս է դրանց վերաբերյալ համապատասխան եզրակացություն:

գ) ուսումնասիրում և վերահսկում է մարզային ենթակայության ընկերությունների, հիմնարկների ու կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների գործառնությունները և ծագած խնդիրների լուծման վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Մարզպետին ներկայացնում է համապատասխան առաջարկություններ:

դ) ուսումնասիրում է ՀՀ Գեղարքունիքի մարզի /սյունիետ՝ Մարզ/ տարածքում ՀՀ Սահմանադրության, օրենքների, ՀՀ Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, կառավարության և վարչապետի որոշումների, մարզպետի որոշումների և կարգադրությունների, ինչպես նաև այլ իրավական ակտերի կատարման ընթացքը և դրանց կատարումն ապահովելու վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում Մարզպետին:

ե) ուսումնասիրում է մարզային ենթակայության ընկերությունների, հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարների կողմից արձակած և ընդունած իրավական ակտերը, այն օրենսդրությանը հակասելու դեպքում՝ առաջարկություն է ներկայացնում Մարզպետին օրենսդրությամբ սահմանված կարգով վերացնելու կամ կասեցնելու համար:

զ) քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները ապահովելու նպատակով կատարում է նրանց դիմում - զանգատների, առաջարկությունների ուսումնասիրություններ, ձեռնարկում է համապատասխան միջոցառումներ և առաջարկություններ է ներկայացնում Մարզպետին:

է) րնդհանրացնում է օրենսդրական ակտերի կիրառման պրակտիկան Մարզում և օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում Մարզպետին:

ը) Աշխատակազմի ստորաբաժանումներին ծանոթացնում է ՀՀ օրենքներին և այլ օրենսդրական ակտերին, ինչպես նաև դրանցում կատարված փոփոխություններին ու լրացումներին:

թ) ուսումնասիրում է Մարզի տարածքում հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեությունը, օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան առաջարկություններ և անհրաժեշտ տեղեկատվություն ներկայացնում Մարզպետին:

ժ) Մարզի տարածքում իրականացնում է ՀՀ օրենքների ու ենթաօրենսդրական ակտերի լուսարձակումն ու պրոպագանդան:

ժա) անհրաժեշտ հսկողություն է սահմանում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունած որոշումների և արձակած կարգադրությունների օրինականությունն ապահովելու ուղղությամբ:

ժբ) մարզի տարածքում իրականացնում է քաղաքացիների և պաշտոնատար անձանց ընդունելություն, ապահովում է նրանց անհրաժեշտ իրավաբանական խորհրդատվությամբ և համապատասխան տեղեկատվությամբ:

ժգ) սահմանված կարգով մասնակցում է իր իրավասությանը պատկանող հարցերի վերաբերյալ միջազգային պայմանագրերի /համաձայնագրերի/ նախագծերի մշակմանն ու քննարկմանը:

ժդ) կազմակերպում է քաղաքացիների և իրավաբանական անձանց՝ Բաժնին հասցեագրված նամակների /դիմումներ, բողոքներ, առաջարկություններ/ քննարկումը և օրենքով սահմանված ժամկետում ապահովում դրանց ընթացքը:

ժե) մասնակցում է մարզպետարանում վարչական վարույթի վերաբերյալ գործերի կազմման և վարման աշխատանքներին:

ժզ) համագործակցում է հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ, անհրաժեշտության դեպքում օրենքով սահմանված կարգով պահանջում հաշվետվություններ, կատարում համապատասխան վերլուծություններ:

ժէ) իրականացնում է իրավական այլ ակտերով սահմանված Բաժնի գործունեության հետ կապված այլ գործառնություններ:

III. ԲԱԺՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ,

ԴԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

6. Բաժինն իր գործունեությունն իրականացնում է Աշխատակազմի հաստիքացուցակով նախատեսված կազմով:
7. Բաժնի գործունեությունը իսմակարգում և վերահսկում է Աշխատակազմի ղեկավարը:
8. Բաժնի ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Բաժնի վարիչը:
9. Բաժնի վարիչը և աշխատողները համարվում են քաղաքացիական ծառայողներ:
10. Բաժնի վարիչի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների քարտեզյան և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների, քաղաքացիական ծառայության դասային աստիճանի հետ կապված դրույթներն սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով: